

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՃԱՌՅԱՆ ԱՆԻ ՀՐԱՉՅԱՅԻ

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐԻ ԴԻԶԱՅՆԸ

ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ,
դիզայն» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

ԱՇԱՐԻԱՆ ԱՆԻ ՐԱՇԵՎՆԱ

ДИЗАЙН ИНТЕРЬЕРА МУЗЕЕВ ЕРЕВАНА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности
17.00.03 – “Изобразительное искусство, декоративное и
прикладное искусство, дизайн”

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր
Քերթմենջյան Դավիթ Գրիգորի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հակոբյան Հրավարդ Հրաչյայի

արվեստագիտության թեկնածու
Հարությունյան Մարտին Վարդանի

Առաջատար կազմակերպություն՝

Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. հունիսի 15-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մայիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Ասատրյան Ա. Գ.

Тема диссертации утверждена в Ереванской художественной государственной академии.

Научный руководитель -

доктор архитектуры, профессор
Кертменджян Давид Григорьевич

Официальные оппоненты -

доктор искусствоведения, профессор
Акопян Гравард Грачьевич

кандидат искусствоведения
Арутюнян Мартин Варданович

Ведущая организация - Армянский государственный педагогический университет им. Х.Абовяна

Защита диссертации состоится 15-го июня 2017г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 15-го мая 2017г.

Ученый секретарь специализированного совета,
доктор искусствоведения, профессор

Асатрян А. Г.

ԱՍԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեման: Թանգարանային ինտերիերի դիզայնը միջավայրի ներդաշնակ, ազդեցիկ և ֆունկցիոնալ գեղարվեստական հորինվածքի նախագծումն է: Այն համակարգային կերպով ամփոփում է թանգարանային միջավայրի գոտևորման, լուսավորության, գունային համադրությունների, կահավորման, տեսողական հաղորդակցության, ցուցանմուշների անվտանգ պահպանման և ներկայացման գործառնությունները: Թանգարանային ինտերիերի դիզայնը բավականին բարդ և համակարգված գործընթաց է, որը մեծ կարևորություն ունի համաշխարհային պրակտիկայում: Թանգարանները կարևորագույն նշանակություն ունեն երկրի մշակութային, կրթական, հասարակական և քաղաքական բնագավառներում, ուստի ցուցանմուշների գրագետ մատուցումը, պահպանումը և անվտանգությունը առաջնային դեր ունեն: Հայաստանը, տարածաշրջանում հանդիսանալով մշակութային խոշոր կենտրոն, հարուստ է իր հնամենի գոյությունն ու զարգացող ներկան ապացուցող խոշոր ներկայանալի նյութով, որը զետեղված է բազմաբնույթ և բազմապրոֆիլ թանգարաններում: Թանգարաններ կան Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, որոնց մեծ մասը կենտրոնացած է մայրաքաղաքում: Թանգարանային ինտերիերի դիզայնի միտումները օրեցօր զարգանում են Երևանում, սակայն դրանք ըստ ցուցանմուշների բնույթի և պրոֆիլային առանձնահատկությունների ունեն ուսումնասիրության և վերանայման կարիք:

Ատենախոսության առարկան: Ուսումնասիրությունը մասնագիտորեն ներգրավում է թանգարանային ինտերիերի դիզայնի զարգացման վերլուծությունը, մեթոդիկան, տեսակներն ու տիպերը, ոճային և պրոֆիլային առանձնահատկությունները, ինչպես նաև ձևավորման հորինվածքային տեսությունը, նախագծային սկզբունքները, հայկական իրականության հետ թեմայի առնչությունները:

Ատենախոսության ժամանակագրական և աշխարհագրական սահմանները: Ատենախոսության ժամանակագրական և աշխարհագրական սահմանների ուսումնասիրման գործում, որպես առավել կարևոր նախադրյալներ, հետազոտվել են Երևանում խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանում հիմնադրված թանգարանները, ներկայացվել են վերջին տարիներին արդիականացված թանգարանների լավագույն օրինակները: Պատմական զարգացման խնդիրների կապակցությամբ ատենախոսությունում անդրադարձ է կատարվել թանգարանների նախատիպերին, ինչպես նաև զուգահեռներ են անցկացվել միջազգային արդի օրինակների հետ:

Ատենախոսության արդիականությունը: Հանդիսանալով մշակութային, տեղեկատվական ու պատմահնագիտական խոշոր կենտրոններ՝ թանգարաններն իրենցից ներկայացնում են խոշոր արժեք: Յուրաքանչյուր թանգարանի կարևորագույն խնդիրներից է մշակութային արժեքների պահպանումը և դրանց ներկայացումը կրթական, ճանաչողական և գիտական տեսանկյուններից, ուստի ցուցանմուշների գրագետ մատուցումը, պահպանումը և անվտանգությունը առաջնային դեր ունեն: Ներկայիս Երևանյան թանգարանների ինտերիերի դիզայնի սակավաթիվ հաջողված օրինակների կողքին՝ նկատելի են բազմաթիվ արդիականացման կարիք ունեցող օրինակներ, որտեղ պահպանվում և ներկայացվում են մշակութային հսկայական արժեք ունեցող նմուշներ: Ուստի անհետաձգելի է դրանց մասնագիտական փաստագրումն ու վերանայումը: Այդ առումով աշխատության մեջ ներկայացվում են թանգարանների դիզայններական հիմնախնդիրները և դրանց բարելավման հնարավորությունները, որոնք կատարվում են տիպաբանական, հորինվածքային և տեխնոլոգիական մոտեցումներով:

Ատենախոսության մեջ քննարկվող միջազգային զուգահեռները, դրանցում առկա ինտերակտիվ սարքավորումների, կոմպլոգիցիոն մտահղացման, նորանոր նյութերի համադրման, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության և այլ միտումներ թույլ են տալիս օբյեկտիվորեն գնահատել Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնը՝ հող նախապատրաստելով դրանց արդիականացման համար:

Այսօր Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի միջազգային զուգահեռներով վերլուծությունը անհետաձգելի անհրաժեշտություն է, որն օժանդակում է մասնագիտական գործունեության ոլորտների հարստացմանը և միջոցների ամբողջացմանը: Փաստն այն է, որ ներկայումս համաշխարհային մեծ նշանակություն ունեցող թանգարաններում չափազանց շատ է կարևորվում ինտերիերի դիզայնի գեղագիտական կազմակերպումը: Դրա վկայությունն է Միավորված ազգերի կոթողային, գիտության և մշակութային կազմակերպությանը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից թանգարանների միջազգային խորհրդի Հայաստանի ազգային կոմիտեի (ICOM) կողմից վեոցին տարիներին կատարված թանգարանների ինտերիերի դիզայնի վերաբերյալ բազում հրապարակումներն ու դասախոսությունները: Ուստի Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի արդիականացումը առդեն կարելի է դիտարկել, որպես համաշխարհային կարևորության հարցադրում: Հարկ է նշել նաև, որ տարեցտարի Հայաստանի Հանրապետությունում զարգանում է զբոսաշրջությունը, որի խթանիչներից մեկը այցելությունն է հյուրընկալ թանգարաններ: Այդպիսով, ժամանակին համընթաց, դրանց գեղագիտական միտումները զարգացնելու հեռանկարները գտնելու համար անհրաժեշտ է կատարել թանգարանների ինտերիերի դիզայնի արդիականացման փաստագրում, վերլուծություն և հետազոտություն:

Ատենախոսության նպատակը: Ատենախոսությունը նպատակաուղղված է Երևան քաղաքի թանգարանների ինտերիերի դիզայնի քննական ուսումնասիրությանը: Հետազոտության հիմնահարցը Երևանի թանգարանների դիզայնի արդիական լուծումների ու առանձնահատկությունների համակողմանի բնութագրումն է, որը կարող է ծառայել նաև որպես դիդակտիկ նյութ հետագա մասնագիտական գործընթացների համար:

Ատենախոսության գիտական խնդիրները: Բնականաբար նման ուսումնասիրությունը մասնագիտական միջազգային իրականությունից և անցած ուղուց ունի իր ելակետերը, որոնցից և ածանցվում են Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի իրականության բնութագրման չափորոշիչները: Որպես այդպիսին ատենախոսությունում գիտական խնդիրներ են սահմանում հետևյալ կետերը.

1. միջազգային իրականությունում թանգարանների ինտերիերի դիզայնի զարգացման նախադրյալների ուսումնասիրումն ու տարածումը Հայաստանի Հանրապետությունում,
2. թանգարանային ինտերիերի դիզայնի կազմակերպման փուլերի ուսումնասիրությունն ու բնութագրումը,
3. Երևանի թանգարանների ցուցակագրումը ըստ պրոֆիլների,
4. պրոֆիլային առանձնահատկությունների քննական ուսումնասիրությունը. ներառյալ՝ ինտերիերի գունային հարաբերության, ցուցադրական տարրերի համամասնության հիմնախնդիրները, միջավայրի՝ կերպարային և մթնոլորտի կազմակերպումը, տարաբնույթ նյութերի հորինվածքային համադրումը, տեսողական հաղորդակցությունը, բնական և արհեստական լուսավորությունը և այլն,
5. Երևանի թանգարանների փաստագրական-վերլուծական ուսումնասիրությունը,

6. միջազգային և երևանյան թանգարանների ինտերիերի դիզայնի բնութագրիչ առանձնահատկությունների համեմատական ուսումնասիրությունը,
7. Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի հիմնական ոճերի ուսումնասիրությունը: Ատենախոսության մեթոդը հիմնվում է պատմական ու տեսական գիտելիքների, միջազգային առաջատար փորձի բնութագրի վրա, որը զուգահեռաբար համեմատության մեջ է դրվում Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի փաստագրավերլուծական տվյալների հետ: Հետևաբար հետազոտությունը որակական մեթոդով է իրականացված:

Ատենախոսության գիտական նորոպը: Մինչ օրս չկա որևէ ծավալուն կամ համառոտ ուսումնասիրություն Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի և նրա մասնագիտական ճյուղերի ուսումնառության պրակտիկայի առնչությամբ: Թանգարանների ինտերիերի դիզայնը, որպես ատենախոսության ուսումնասիրության առարկա հանդես գալով առաջին անգամ, իր մեջ ներառում է.

- Երևանում գործող թանգարանների ըստ պրոֆիլների փաստագրումը,
- միջավայրային և նախագծային առանձնահատկությունների, լուսավորության, գոտևորման, հորինվածքի, տեսողական հաղորդակցության, կահավորման վերլուծությունը,
- թանգարանների համեմատական վերլուծությունը միջազգային նույնապրոֆիլ թանգարանների լավագույն օրինակների հետ,
- Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնի տիպաբանական, ոճային հորինվածքային և տեխնոլոգիական վերլուծությունը,
- թանգարանների ինտերիերի դիզայնի արդիականացման հնարավորությունների առաջարկներ:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել գործնական նախագծման, ինչպես նաև տեսական ու մեթոդական ուսումնասիրությունների համար: Ատենախոսության դրույթները հրապարակվել են ՀՀ մասնագիտական մամուլում հոդվածների ձևով: Աշխատության հիմնական դրույթների մասին հրապարակումներ են կատարվել ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտի երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջաններում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի հետազոտական կենտրոնի և գիտական մասի կողմից կազմակերպված հանդիպումներում:

Ատենախոսության գրականության տեսությունը: Աշխատության գիտական գրականության տեսության մի մասը կազմում են Հայաստանի Հանրապետությունում դիզայնի բնագավառին առնչվող սակավաթիվ հրատարակությունները: Անհրաժեշտ է նշել, որ եղած հրատարակությունների մեծամասնությունը մասնագիտական մեթոդական բնույթ չեն կրում և կարիք ունեն քննական ընդհանրացման: Բացի այդ ՀՀ պրակտիկայում դեռևս չկա թանգարանային ինտերիերի դիզայնին նվիրված որևէ նշանակալի գիտական հրատարակություն: Գոյություն ունեցող հրապարակումները ընդգրկում են ընդհանուր դիզայնի մասնագիտությամբ պաշտպանված մի քանի ատենախոսություններ, մնացյալն առնչվում է թանգարանագիտական բնագավառին: Գիտական գրականության մյուս մասը կազմում են տեսության պատմության, ժամանակակից դիզայնի արվեստաբանության և պրակտիկային նվիրված գործերը: Ատենախոսության տեսական խնդիրների համար ներգրավվել են տուրիստական, թանգարանագիտական, ճարտարապետական և դիզայներական հրատարակություններ: Քանի որ դիզայնի վերաբերյալ հայկական աշխատությունները սակավ են, սույն ատենախոսությունում օգտագործվել են

միջազգային հրապարակումներ, որոնք տպագրված և համացանցի օրինակներով ներգրավված են ատենախոսության բովանդակության մեջ:

Ատենախոսության շարադրման գործընթացում օգտագործվել են թանգարանային ինտերիերի դիզայնին առնչվող միջազգային և տեղական պատմատեսական նյութեր, հոդվածներ և հրապարակումներ (Գիբս Բ., Հարությունյան Մ., Տիգրանյան Է., Darragh J., Bogle E.): Հարկավոր է նշել, որ աշխատությունը շարադրելիս բացի նշված գրականությունից օգտագործվել են թանգարանների արխիվային նյութեր, ինչպես նաև տեղում կատարվել է հետազոտություն:

Ատենախոսության կառուցվածքը և հակիրճ բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից և վերատպություններից:

Ներածությունում ներկայացված են ատենախոսության հիմնական նպատակներն ու խնդիրները, աշխատանքի իրականացման տեսական և մեթոդաբանական հիմքը, թեմայի կարևորությունն ու արդիականությունը, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, սկզբնաղբյուրների ու գրականության հակիրճ տեսությունը:

«Պատմատեսական ակնարկ, բնագավառի միջազգային փորձը և ուսումնասիրության ենթակա օբյեկտների ընտրությունը» վերնագիրը կրող առաջին գլխում ուսումնասիրվել են թանգարանային պատմության տեսական վկայությունները, թանգարանային ինտերիերի դիզայնի հիմնական առանձնահատկությունները, նախագծման փուլերը, ինչպես նաև կատարվել է Երևանի թանգարանների պրոֆիլային դասակարգման ցուցակագրումը:

«Երևանի խորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ինտերիերի դիզայնը» վերնագիրը կրող երկրորդ գլխում ուսումնասիրվել են խորհրդային շրջանում հիմնադրված թանգարանների տիպաբանական և ոճային առանձնահատկությունները, առանձնակի վերլուծության են ենթարկվել Հայաստանի ազգային պատկերասրահի, Հայաստանի պատմության թանգարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի, ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարանի, Հայաստանի փայտարվեստի թանգարանի ինտերիերները, ինչպես նաև ներկայացվել են դրանց միջազգային ճանաչողությունը:

«Երևանի հետխորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ինտերիերի դիզայնը» վերնագիրը կրող երրորդ գլխում ուսումնասիրվել են հետխորհրդային շրջանում հիմնադրված թանգարանների տիպաբանական և ոճային առանձնահատկությունները, առանձնակի վերլուծության են ենթարկվել Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Հայաստանի բնության պետական թանգարանի, Գաֆեսճեան արվեստի կենտրոնի, Կալենց թանգարանի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ինտերիերները, ինչպես նաև ներկայացվել են դրանց միջազգային ճանաչողությունը:

Գլուխ առաջին. «Պատմատեսական ակնարկ, բնագավառի միջազգային փորձը և ուսումնասիրության ենթակա օբյեկտների ընտրությունը». ներկայացվել է թանգարանների ինտերիերի դիզայնի դերն ու նշանակությունը, բերվել են թանգարանների ծագման վաղ օրինակների պատմատեսական նկարագրերը, կատարվել է թանգարանների դասակարգումը ըստ պրոֆիլների և դրանց առանձնահատկությունների բնորոշումը: Առաջին գլուխը բաղկացած է տասնթագլուխներից:

Առաջին ենթագլխում «Պատմական ակնարկ» վերնագրով դիտարկվում է թանգարանների ծագման ու զարգացման պատմությունը, ինչպես նաև քննարկվում են թանգարանային ինտերիերի դիզայնի դերն ու նշանակությունը: Թանգարանները, կախված ցուցադրված հավաքածուներից, կրում են որոշ առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են թե՛ ցուցանմուշների պահպանման, և թե՛ մատուցվող նյութի միջավայրի կազմակերպման գործում: Համաշխարհային պատմությունը վկայում է, որ ի սկզբանե թանգարանները, որպես հասարակական մշակութային վայրեր ձևավորված չէին եղել: Դրանք, տարեցտարի զարգացած՝ համակարգելով թե՛ այցելուների հոսքի կառավարումը, թե՛ ցուցադրության կազմակերպումը, և թե՛ ցուցանմուշների անվտանգ պահպանումը:

Երկրորդ ենթագլխում «Թանգարանների ծագումն ու զարգացումը» վերնագրով դիտարկվել են թանգարանների ամենավաղ օրինակները: Թանգարանների առաջին օրինակներն ի հայտ են եկել մարդկության զարգացման այն փուլում, երբ առարկաների բնատիպերը սկսվել են պահպանվել ոչ թե որպես կիրառական-տնտեսական արժեքներ, այլ որպես վավերական, գեղագիտական վկայություններ: Հայ իրականությունում թանգարանների ամենավաղ օրինակներն ի հայտ են եկել մ.թ.ա. IX–VI-րդ դարերում, զարգանալով, հասնելով մինչև XIX-րդ դար:

Երրորդ ենթագլխում «Թանգարանների դասակարգումը» վերնագրով ներկայացվել է թանգարանների պրոֆիլային դասակարգումը, ինչպես նաև դիտարկվել են պրոֆիլային առանձնահատկությունների անմիջական դրսևորումները ինտերիերի դիզայնում:

Չորրորդ ենթագլխում «Թանգարանների հատակազմային հիմնախնդիրները» վերնագրով դիտարկվել են ներքին և արտաքին միջավայրի նախագծման դրույթները. տեղակայումը քաղաքային միջավայրում, դիրքը, հասանելիությունը:

Հինգերորդ ենթագլխում «Թանգարանային ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները» վերնագրով քննարկվել են դիզայնի հորինվածքի բովանդակային միասնականության և ներդաշնակության հարցերը: Թանգարանային ինտերիերի դիզայնը համակարգային գործընթաց է, որն իր մեջ ամփոփում է մի շարք գործառույթներ՝ կախված պրոֆիլային առանձնահատկություններից, տիպային պատկանելությունից և նշանակությունից: Թանգարանային միջավայրը կարևոր դեր է խաղում ցուցանմուշները ընկալելու, այցելուների հետաքրքրասիրությունը բավարարելու, այցելությունների արդյունավետությունը խթանելու գործում:

Վեցերորդ ենթագլխում «Ինտերիերի դիզայնի նախագծային գործընթացի կազմակերպումն ու կառավարումը» վերնագրով դիտարկվել են ինտերիերի կազմակերպման գործընթացի հիմնադրույթները: Թանգարանային միջավայր նախագծելիս կարևորվում են հոգեբանության մի շարք գործոններ, որոնք թելադրում են այցելուների ներգրավվածությունն ու վարվելակերպը:

Յոթերորդ ենթագլխում «Թանգարանների ինտերիերի դիզայնը ըստ պրոֆիլների» վերնագրով ներկայացվել է պրոֆիլային առանձնահատկությունների անդրադարձը ինտերիերի դիզայնի վրա: Թանգարանները լինում են գեղարվեստական, պատմական, բնագիտական, տեխնիկական, հուշային, ճարտարապետական և կոմպլեքսային: *Գեղարվեստական* թանգարաններում թեմատիկ հավաքածուներով ամփոփված են գեղարվեստական աշխատանքներ: Այստեղ կարևորվում են նմուշների ջերմալուսային անվտանգությունը, ուղղորդված լուսավորությունը, հետազոտական միջավայրի ապահովումը, գունային ընդհանրական լուծումների համադրումը, որը չի խանգարի յուրաքանչյուր աշխատանքի գույների ճիշտ ընկալմանը: *Պատմական* թանգարաններում ցուցադրվում են որևէ դարաշրջանին կամ երևույթին առնչվող պատմամշակութային

արժեք ունեցող նմուշներ: Այստեղ կարևորվում է իրերի պահպանման համար ջերմախոնավային պայմանների ապահովումը և գունալուսային շահեկան լուծումների ընտրությունը: *Բնագիրական* թանգարաններում ցուցադրվում և պահպանվում են բուսական, կենդանական, կենսաբանական արժեք ներկայացնող նմուշներ: Այսպիսի թանգարաններում ինտերիերի դիզայնը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուր ցուցանմուշի անհատական ջերմալուսային պահանջները, ընդհանուր միջավայրի ներդաշնակությունը չաղճատելով: *Տեխնիկական* թանգարաններում ցուցադրվում են տեխնիկայի տարբեր միջոցներ: Այստեղ կարևորվում է հատկապես մարդու և ցուցանմուշի միջև անհատական շփման հնարավորությունը, որով առավել անմիջական փոխհարաբերություն է ստեղծվում: *Հուշային* թանգարաններում առանցքային խնդիրը որևէ հայտնի գործչի կենդանության շունչը պահպանելն ու հաղորդելն է: Այստեղ ինտերիերի դիզայնը գրեթե փոփոխության չի ենթարկվում: *Ճարտարապետական* թանգարաններում հիմնականում ցուցանմուշների տեսքով ներկայացվում են պլանային գծագրեր, ճակատային հորինվածքներ և մանրակերտեր: *Կոմպլեքսային* թանգարաններում համակարգվում են տարաբնույթ նմուշներ: Այստեղ հիմնականում ինտերիերի լուծումների միջոցով է թելադրվում մեկ միջավայրից մյուսին սահուն անցումը, որով և թելադրվում են բովանդակային տարբերությունները:

Ութերորդ ենթագլխում «Թանգարանների միջազգային կարևորագույն օրինակներն ու զուգահեռները» վերնագրով ներկայացվել են ինտերիերի դիզայնի լավագույն լուծումներ ունեցող թանգարանների օրինակները, ցուցակագրական կերպով ներկայացվել է նաև դրանց տարեկան այցելությունների թիվը, մակերեսը, ցուցանմուշների քանակը և տեղակայումը: Այդ թանգարանների շարքում են Լուվրը, Բրիտանական թանգարանը, Օրսեյի թանգարանը, Պոմպիդու կենտրոնը և այլն:

Իններորդ ենթագլխում «Թանգարանների ինտերիերի նախագծման փուլերը» վերնագրով ներկայացվել է ինտերիերի դիզայնի կազմակերպման փուլերի հաջորդականությունը: Վերոհիշյալ փուլերն իրենցից ենթադրում են հատակագծի բաժանումը և կազմակերպումը ըստ մուտքի, նախասրահի, տեղեկատվական սրահի, աշխատասենյակների, արխիվի, ցուցասրահների, դահլիճի, գրադարանի և հարակից այլ գոտիների: Թանգարաններում մեծ կարևորություն ունի նաև տարածքի ոճավորումը, լուսավորությանը, էրգոնոմիկ, գունային, տեքստուրալ համադրությունները, կահավորումը և այլն: Լուսավորությունը թանգարաններում հիմնականում իրականանում է արհեստական, ուղղորդված տարբերով և ըստ պրոֆիլի ունենում է իր առանձնահատկությունները: Կահավորումը կազմակերպվում է ըստ ցուցանմուշների տեսակի, հաշվի առնելով էրգոնոմիկ նկատառումները և ոճային հորինվածքը: Թանգարանային ինտերիերի դիզայնի անբաժանելի մասն է կազմում տեսողական հաղորդակցությունը, որի միջոցով կատարվում է այցելուների ուղղորդումը և ճանաչողությունը:

Տասներորդ ենթագլխում «Պատմական ակնարկ հայկական թանգարաններից» վերնագրով դիտարկվել են հայկական թանգարանների ստեղծման առաջին օրինակները, բերվել է ներկայումս գործող Երևանյան թանգարանների պրոֆիլային դասակարգումը: Հայաստանի տարածքում թանգարանների նախատիպեր կային դեռևս մ.թ.ա. IX–VI-րդ դարերում: «Լուվրյան աղյուսակում» նկարագրվող Մուծաձորի արքայական և տաճարային գանձատուն-թանգարաններում իրերը պահպանվում էին ըստ պատրաստման նյութի և ներկայացված էին համապատասխան ցուցադրությամբ: Թանգարաններ կան Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, սակայն դրանց մեծ մասը տեղակայված է Երևանում: Այստեղ ներկայումս գործում է 42 թանգարան: Դրանք ըստ պրոֆիլների դասակարգվում են հետևյալ կերպ.

Գեղարվեստական		
Հայաստանի ազգային պատկերասրահ	1921թ.	12
Ռուսական արվեստի թանգարան	1936թ.	
Մ. Սարյանի տուն-թանգարան	1967թ.	
Հ. Կոջոյանի և Ա. Սարգսյանի տուն-թանգարան	1973թ.	
Գևորգ Գրիգորյանի (Ջոտոտո) արվեստանոց-թանգարան	1977թ.	
Հայաստանի փայտարվեստի թանգարան	1977թ.	
Ժամանակակից արվեստի թանգարան	1972թ.	
Երվանդ Քոչարի թանգարան	1984թ.	
«Էդուարդ Իսաբեկյան» ցուցասրահ	2004թ.	
Գաֆեսեճեան արվեստի կենտրոն	2009թ.	
Կալենց թանգարան	2010թ.	
Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն	1930-2011թ.	
ՊԱՏՄԱԿԱՆ		
Հայաստանի պատմության թանգարան	1921թ.	10
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան	1921թ.	
Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարան	1922թ.	
Երևանի պատմության թանգարան	1931թ.	
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան	1968թ.	
ՀՀՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարան	1970թ.	
«Զորավար Անդրանիկ» թանգարան	1995թ.	
Հայոց գեղասպանության թանգարան-ինստիտուտ	1995թ.	
Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմության թանգարան	2007թ.	
Արարատ կոնյակի գործարանի թանգարան	1887թ.	
ԲՆԱԳԻՏԱԿԱՆ		
Հ. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարան	1937թ.	2
Հայաստանի բնության պետական թանգարան	2000թ.	
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ		
Հայաստանի երկաթուղու թանգարան	2009թ.	3
Կապի թանգարան	2012թ.	
Տիեզերքի թանգարան	2001թ.	
ՀՈՒՇԱՅԻՆ		
Խ. Աբովյանի տուն-թանգարան	1938թ.	13
Հովհ. Թումանյանի տուն-թանգարան	1953թ.	
Ավ. Իսահակյանի տուն-թանգարան	1963թ.	
Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարան	1963թ.	
Ե. Չարենցի տուն-թանգարան	1964թ.	
Դ. Դեմիրճյանի տուն-թանգարան	1977թ.	
Ա. Խաչատրյանի տուն-թանգարան	1978թ.	
Կոմիտասի թանգարան-ինստիտուտ	2015թ.	
Ս. Կապուտիկյանի տուն-թանգարան	2003թ.	
Կ. Դեմիրճյանի թանգարան	2001թ.	
Շառլ Ազնավուրի տուն-թանգարան	2011թ.	
Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան	2014թ.	

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ		
Ալեքսանդր Թամանյանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ	1990թ. 2016թ.	1
ԿՈՄՊԼԵՔՍՆԵՐ		
Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան	1921թ.	1

Գլուխ երկրորդ. «Երևանի խորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ինտերիերի դիզայնը». ուսումնասիրվել են Երևանում խորհրդային ժամանակաշրջանում հիմնադրված 25 թանգարանները, ներկայացվել են դրանց դիզայնի և արվեստի առանձնահատկությունները: Հանգամանալի վերլուծության են ենթարկվել խորհրդային շրջանում հիմնադրված թանգարանների տիպաբանական և ռճային առանձնահատկությունները, առանձնակի հետազոտության են ենթարկվել Հայաստանի ազգային պատկերասրահի, Հայաստանի պատմության թանգարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի, ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարանի, Հայաստանի փայտարվեստի թանգարանի ինտերիերները, ներկայացվել են դրանց միջազգային զուգահեռները և արդիականացման հնարավորությունները:

Առաջին ենթաբաժնում «Երևանի խորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ցուցակագրումը ըստ պրոֆիլների և դրանց ինտերիերի դիզայնը» վերնագրով ցուցակագրվել են Երևանում խորհրդային տարիներին հիմնադրված թանգարանները: Ներկայացվել են նաև վերջին տարիներին հիմնանորոգված թանգարանները (Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան, Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը):

Երկրորդ ենթաբաժնում «Հայաստանի ազգային պատկերասրահ» վերնագրով ուսումնասիրվել է պատկերասրահի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ռճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Հայաստանի ազգային պատկերասրահի յուրաքանչյուր սրահում զետեղված են միևնույն ոճին կամ ժամանակաշրջանին պատկանող արվեստի գործեր: Այստեղ հատակազծային լուծումներում խոչընդոտ են հանդիսանում սրահների միջև նեղ անցուղիները, որոնք հաճախ խցանումների պատճառ են դառնում: Այս նույն խնդիրն ի հայտ է գալիս նաև նեղ աստիճանահարթակներում, որոնց խաչվող հորինվածքը խաթարում է մարդկային հոսքի դյուրին տեղաշարժը: Հայաստանի ազգային պատկերասրահը և Հայաստանի պատմության թանգարանը գտնվում են միևնույն կառույցի ներսում, ունեն ընդհանուր մուտք, դա է պատճառը, որ մարդկային հոսքի ճիշտ ուղղորդման համար արդեն իսկ պարտադիր է ունենալ տեսողական հաղորդակցության այնպիսի լուծումներ, որոնք ի սկզբանե կհուշեն, թե որ թանգարանը, որտեղ է գտնվում: Պատկերասրահի ինտերիերում գերակշռում են պաստելային երանգները, որոնք հիմնականում արտահայտված են սպիտակ, դարչնագույն, երկնագույն, մանուշակագույն համադրություններով: Դրանք համադրվում են առաստաղի ճերմակ մակերեսին և ամբողջացվում մանրահատակի փայտի գունեղանգով: Ազգային պատկերասրահում շատ են պատուհանները, որոնք մինչ օրս վարագույրների սովորական շերտով են սքողված: Հայտնի է, որ բնական լույսը գեղանկարչական աշխատանքների համար մեծ վտանգ է ներկայացնում: Բնական լուսավորությունը համալրում են առաստաղին փակցված ցերեկային լուսատուները: Զուգահեռներ անցկացնելով ժամանակի լավագույն նույնապրոֆիլ թանգարանների միջև, որպես

լավագույն օրինակներ կարելի է նշել Լուվրը, Էրմիտաժը և Սալամոն Գուգենհայմի թանգարանները: Դիտարկելով համաշխարհային փորձը և ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները կարելի է հանգել եզրակացության, որ Հայաստանի ազգային պատկերասրահը եզակի է իր ցուցանմուշների նշանակությամբ և հարստությամբ, սակայն դրանց գրագետ մատուցման համար ունի արդիականացման կարիք: Ֆունկցիոնալ նպատակահարմարության առումով հարկ է վերանայել մարդկային շարժման գրաֆիկների, ցուցադրվող նյութերի ներկայացման, լուսավորության, անվտանգության համակարգերը, ինչպես նաև հատակազծային բարդ հորինվածքը:

Երրորդ ենթագլխում «Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան» վերնագրով ուսումնասիրվել է Մատենադարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անգնագվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Նեոհավակաև ոճով կառուցված Մատենադարանի շենքի մոնումենտալ աստիճանները տանում են դեպի Մետրոպ Մաշտոցի և Կողբունի՝ Ղուկաս Զուբարյանի կողմից կերտած արձանները: Շենքի ճակատները զառուրդված են օանդակներով և խաչքարերով: Մատենադարանի հին շենքը և նորակառույց համալիրը կառուցված են բազալտից, որն արտահայտվում է նաև ինտերիերում համադրվելով այլ քարերի հետ: Այստեղ գերակշռում են սպիտակից դեպի շագանակագույն անցումային երանգները, այդ իսկ պատճառով ընդհանուր միջավայրը միապարզ է նայվում: Ցուցասրահներում առկա են թվային էկրաններ, որոնք իրենց խոշոր սև ծավալներով չեն ինտեգրվում ընդհանուր դասական միջավայրին: Այստեղ նվազագույնի է հասցված բնական լուսավորությունը: Առկա լուսամուտները ներսից երբեմն փակվում են շերտավարագույրներով: Առաստաղին ամրացված ճենապակե ջահերին լրացնելու են գալիս ցուցափեղկերի ներսում առկա ուղղորդված լուսատուները: Այստեղ ձեռագրերի ներկայացումն իրականացվում է դասական ոճով նախագծված ցուցափեղկերի միջոցով: Դրանք ցուցանմուշների բնույթից կախված ունեն ուղղաձիգ և հորիզոնական կառուցվածք: Թեև ցուցափեղկերի նախագծումն իրականացված է հենց հին ձեռագրերի ներկայացման համար, բայց դրանցում չի լուծված ջերմախոնավային համակարգերի ներկառուցման հարցը: Այդ իսկ պատճառով դրանք կարող են վտանգի ենթարկել հին նմուշները: Միջազգային զուգահեռներ անցկացնելով կարելի է դիտարկել մեծ ճանաչում գտած թանգարանները և ձեռագրատները, որոնցից առանձնանում Բլեքբրնի թանգարան-պատկերասրահը, Բրիտանական գրադարանը, Վիկտորիա և Ալբերտ թանգարանը: Դիտարկելով համաշխարհային փորձը և ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները կարելի է հանգել եզրակացության, որ թեև Մատենադարանը վերջերս է վերանորոգվել, և հազեցվել է ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով, սակայն ցուցասրահներն, այնուամենայնիվ, ունեն արդիականացման կարիք, որի արդյունքում առավել նպատակահարմար կերպով կմշակվեն կոմպոզիցիոն հորինվածքը, գունալուսային և կահավորման համակարգերը:

Չորրորդ ենթագլխում «Հայաստանի փայտարվեստի թանգարան» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Փայտարվեստի թանգարանը բաժանված է երկու միմյանց հետ կապ ունեցող հարկաբաժինների: Այստեղ ողջ ինտերիերի դիզայնը բնական նյութերով է կազմակերպված. փայտե ցուցափեղկերին, համադրվելու են գալիս փայտե բազրեծողերը, ինչպես նաև մետաղական տարրերը,

պատերի ու հատակի քարե լուծումները: Թանգարանում լուսավորությունն իրականանում է ինչպես բնական, այնպես էլ արհեստական եղանակով: Փայտե կարկասային ուղղորդված լուսավորության համակարգը և կետային լուսատուները փակցված են ինչպես պատերին, այնպես էլ փակ ցուցափեղկերին: Թանգարանի ցուցափեղկերը փայտե, ապակեպատ վերնամասով պատվանդանների տեսք ունեն: Միջազգային նույնանման թանգարաններից աչքի է ընկնում Ֆիլադելֆիայի փայտարվեստի կենտրոնը, որտեղ ներկայացվում են ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր ցուցադրություններ: Հայաստանի փայտարվեստի թանգարանի ինտերիերի այսպիսի միապաղաղությունը որոշ չափով խաթարում է թանգարանի գրավչությունը: Ուստի կարելի է ասել, որ որքան էլ հաճելի է բնական նյութերով հագեցած միջավայրը, բայց այստեղ կոնտրաստներ ստեղծելու մեծ անհարժեշտություն կա, որը կառանձնացնի ինչպես ցուցանմուշները, այնպես էլ կստեղծի որոշակի ռիթմ:

Հինգերորդ ենթագլխում «Հայաստանի պատմության թանգարան» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Թանգարանում ցուցադրական միտքը բացահայտվում է ուղղորդված հերթականությամբ, այսինքն՝ նախասրահից ձախ մտնելով, ցուցադրահներում միշտ գործում է ձախակողմյան ուղղվածությունը: Երկրորդ հարկում ցուցադրության համար նախատեսված տարածքն ավելի փոքր է, սակայն միևնույն ժամանակ խիստ հավասարակշռված է: Թանգարանի յուրաքանչյուր ցուցանմուշ ունի իր տակագիրն ու բացատրությունը, որոնք ամբողջապես ինտեգրվում են ինտերիերի դիզայնին: Ցուցափեղկերում էրգոնոմիկ նկատառումներից ելնելով առարկաները տեղադրված են տարամասշտաբ պատվանդանների վրա: Ինտերիերում գերակշռում են կապտագորշ երանգները, որոնցում սպիտակ հիմքերի վրա ուղղորդված լուսավորությամբ առանձնանում են ցուցանմուշները: Մյուս սրահներում գունային զամման ավելի ակտիվ է՝ պայմանավորված ցուցադրվող նմուշների գույներով: Որպես միջազգային նմանօրինակ թանգարանի, զուգահեռներ են անցկացվել Հունաստանում 2009թ.-ին բացված Ակրոպոլիս թանգարանի հետ: Վերոհիշյալ ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել եզրակացության, որ Հայաստանի պատմության թանգարանի ինտերիերի դիզայնը բավականին գրագետ է կազմակերպված: Այստեղ նկատվում են ռացիոնալիստական ոճի դրսևորումները: Որոշ սրահներում, այնուամենայնիվ, վերանորոգման կարիք է զգացվում:

Վեցերորդ ենթագլխում «Հովհաննես Թումանյանի թանգարան» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Թանգարանի հորինվածքում ամփոփված են գրողի տունը վերարտադրող ինտերիերները, ցուցասրահները, գրադարանը և դահլիճը: Այստեղ ցուցափեղկերը միմյանց նկատմամբ ունեն կանոնավոր տեղակայում, և ուղղորդում են այցելուներին ըստ թեմատիկ հաջորդականության: Ընդհանուր միջավայրի կազմակերպումը միապաղաղ է: Հորինվածքում չի շեշտվում դոմինանտն ու երկրորդականը: Ուշագրավ է երկրորդ հարկի հուշային գոտին, որի կազմակերպումը ամբողջապես արթնացնում է հեղինակի կենդանի վերհուշը: Թանգարանում գերիշխում է սպիտակ հարդարանքը, որը համադրվում է հատակի շագանակագույն փայլուն մակերեսին: Այստեղ լուսավորությունն իրականացվում է բնական և արհեստական եղանակով: Ցուցանմուշները շեշտվում են ցուցափեղկերի

ներսում առկա լուսատուների միջոցով: Որպես միջազգային նույնօրինակ թանգարանի զուգահեռներ են անցկացվել Մարկ Տվենի տուն-թանգարանի հետ: Ամփոփելով կարելի է ասել, որ Հովհաննես Թումանյանի թանգարանն ունի շատ լավ ճարտարապետական հորինվածք, որի հիման վրա կարելի է ստեղծել միասնական գրազետ ինտերիեր: Թեպետ թանգարանի հատակազծային լուծումները բավականին շահեկան են, սակայն հիմնանորոգումների բացակայության պատճառով այստեղ լուսավորության, կահավորման, գունային և էրգոնոմիկ լուծումներն ունեն արդիականացման կարիք: Հաշվի առնելով, որ թանգարանն ունի տարբեր գոտիներ, հարկաբաժիններ և ինտերակտիվ ցուցադրություն, կարելի էր ընդհանուր հորինվածքի ոճին համապատասխան մշակել նաև կողմնորոշիչ նշաններ:

Յոթերորդ ենթագլխում՝ «ՀՀ ՊՆ Մայր Հայաստան զինավորական թանգարան» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Թանգարանի ցուցադրությունը սկսվում է էքստերիերից, ուր ցուցադրված են մի շարք խոշոր զինատեսակներ, որոնցից վեր աստիճանահարթակի վրա բացվում է թանգարան տանող երկփեղկ դուռը: Թանգարանի առաջին սրահի կոմպոզիցիոն կենտրոնը կառույցի երեք հարկերը միմյանց կապող շրջանաձև խորշն է: Այստեղ գերիշխում է կարմիր տուֆի հարդարանքը, որին համադրվելու է գալիս մարմարե հատակը: Հորինվածքին համեմատական թեթևություն են հաղորդում սպիտակ պատերն ու մեծ ցուցափեղկերը: Բրոնզաձուլ լուսավորության համակարգերն ու բազրեձողերը նախագծված են ըստ թանգարանի բովանդակության: Այստեղ լուսավորությունը հիմնականում կատարվում է արհեստական եղանակով: Այն տարբերվում է միայն Հուշ-դահլիճում, որտեղ շատ թույլ է, ուղղորդված և կախարդական տպավորություն է թողնում: Միջազգային նույնապարֆիլ թանգարաններից դիզայնեռական լուծումներով հատկապես աչքի են ընկնում Բաստոնի պատերազմի թանգարանը Բելգիայում և Կայսերական ռազմական թանգարանը Լոնդոնում: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ թեև ՀՀ ՊՆ Մայր Հայաստան թանգարանը ունի հարուստ ցուցադրություն և գերազանց ճարտարապետական հորինվածք, որն այնուամենայնիվ, արդիականացման կարիք ունի:

Ութերորդ ենթագլխում՝ «Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Այն երևանում գործող միակ կոմպլեքսային թանգարանն է: Ցուցադրությունը կազմակերպված է 5 սրահներում, որոնցից առաջին երկուսում ներկայացված է հայ գրականությունը, երրորդում՝ թատերարվեստը, չորրորդում՝ կինոարվեստը, հինգերորդում՝ երաժշտարվեստը: Համապատասխանաբար գրականության երկու սրահներում իշխում է թանաքագույնը, իսկ թատրոնի և երաժշտարվեստի սրահներում՝ կարմրաշագանակագույնը: Ցուցափեղկերը նույն համաչափություններով ներգծված են գիպսոստվարաթղթե պատերի մեջ և առանձնանում են ճերմակ ներսույթով ու առանձին ներքին լուսավորությամբ: Սրահից սրահ անցումը կատարվում է նեղ անցուղիներով, որոնք դասավորված են միևնույն ուղղու վրա և իրար են կապվում ցուցադրության ողջ կոմպոզիցիան միավորող կապույտ ուղեգորգով: Ցուցասրահը լուսավորված է արհեստականորեն, առկա լուսամուտները ծածկված են շարժական թիթեղներով, որոնք պահպանելով օդափոխության համար անհրաժեշտ անցքերը,

ծուլվում են ինտերիերին, դիտարկվելով որպես մեկ ամբողջական պատ: Միջազգային նույնապրոֆիլ թանգարաններ բավականին դժվար է գտնել, բայց այնուամենայնիվ կատարված հետազոտության արդյունքում զուգահեռաբար նմանություններ են նկատվում Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանի հետ, որտեղ ևս ցուցանմուշները բազմազան են և տարբերվում են իրենց բնույթով, դրանով իսկ մոտ դառնալով կոմպլեքսային թանգարան հասկացությանը: Նշվածից երևում է, որ ԳԱԹ-ի ցուցասրահը թանգարանի զարդն է հանդիսանում և ինտերիերի դիզայնով լավագույնս համապատասխանում է բովանդակային համակարգմանը: Թանգարանի գլխավոր թերությունը հանդիսանում է դրա ճարտարապետական մասը, որի պատճառով մեծապես տուժում է ինտերիերի ողջ հորինվածքը:

Գլուխ երրորդ. «Երևանի հետխորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ինտերիերի դիզայնը». դիտարկվել են Երևանում հետխորհրդային ժամանակաշրջանում հիմնադրված 17 թանգարանները, ներկայացվել են դրանց առանձնահատկությունները: Հանգամանալի ուսումնասիրության են ենթարկվել հետխորհրդային շրջանում հիմնադրված թանգարանների տիպաբանական և ոճային առանձնահատկությունները, առանձնակի վերլուծության են ենթարկվել Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Հայաստանի բնության պետական թանգարանի, Գաֆեսեճյան արվեստի կենտրոնի, Կալենց թանգարանի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ինտերիերները, ինչպես նաև ներկայացվել են դրանց միջազգային զուգահեռները:

Առաջին ենթագլխում «Երևանի հետխորհրդային ժամանակաշրջանի թանգարանների ցուցակագրումը ըստ պրոֆիլների և դրանց ինտերիերի դիզայնը» վերնագրով ցուցակագրվել և ուսումնասիրվել են Երևանում հետխորհրդային տարիներին հիմնադրված թանգարանները:

Երկրորդ ենթագլխում «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Հարկ է նշել, որ 2016թ.-ին Հայաստանի ճարտարապետության թանգարան-ինստիտուտը և Ալ. Թամանյանի թանգարանը, միավորվեցին: Պատճառն այն էր, որ դրանք գործում էին իրար կից միևնույն կառույցի ներքո, ինչպես նաև դրանց պրոֆիլը նույնն էր: Այսպիսով տարածքի ընդարձակման և ինտերիերի դիզայնի կազմակերպման համար բարենպաստ նախադրյալներ ստեղծվեցին: Ցուցասրահի ընդհանուր գունային զամման սպիտակի և մոխրագույնի համադրումն է, բայց դրան լրացնելու են գալիս տպագիր վահանակները՝ իրենց համարձակ գունային լուծումներով: Ցուցափեղեկերի պատվանդաններն ու շարժական պատերը ևս ճեմմակ են՝ շրջանակված մետաղական կարկասով: Ցուցասրահում առկա են լուսամուտներ, որոնց մի մասը սքողված են շերտավարագույրով: Բնական լուսավորությունը այսպիսով նվազագույնի է հասցված, իսկ արհեստական լուսավորությունը կազմակերպված է ընդհանուր և կետային տարբերակներով: Որպես միջազգային նույնօրինակ թանգարանի, զուգահեռներ են անցկացվել Գերմանական ճարտարապետական թանգարանի հետ: Դիտարկելով համաշխարհային փորձը և ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները կարելի է հանգել եզրակացության, որ Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտը Ալ. Թամանյանի թանգարանի հետ միավորվելով շարունակում է կատարել նախնական գործունեությունը, այն եզակի է իր ցուցանմուշների նշանակությամբ և հարստությամբ, սակայն դրանց գրազեռ մատուցման համար ունի

արդիականացման կարիք: Ֆունկցիոնալ նպատակահարմարության առումով ճարտարապետական թանգարանի ինտերիերի դիզայնը պահանջում է հատակազծային յուրահատուկ լուծումներով նախագծված առանձին շինություն՝ նախատեսված հենց թանգարանի համար: Անհրաժեշտ է նշել նաև, որ ժամանակակից ճարտարապետական թանգարաններն ուղղակիորեն դժվար է պատկերացնել առանց ինտերակտիվ թվային սարքավորումների, որոնք հնարավորություն են ընձեռում դիտողին վիրտուալ կերպով մոտենալ կառույցին ցանկացած դիտակետից, ներս մտնել, շրջել և այլն:

Երրորդ ենթագլխում «Գաֆեճեան արվեստի կենտրոն» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անգնազմել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Այստեղ ներկայացվում է կենտրոնի հիմնադիր Զերարդ Գաֆեճեանի ավելի քան 5000 արվեստի նմուշ պառունակող հավաքածուն: Թանգարանի ռնդհանուր հորինվածքը, կասկադային լուծումներից ելնելով, պրոգրեսիվ է և դինամիկ: Միջավայրում նկատվում են և՛ համարձակ կոնտրաստներ, և՛ պաստելային նուրբ անցումներ: Հորինվածքի այսպիսի ընտրությունը պայմանավորված է ցուցանմուշների ներկայացման պահանջներով: Սրահներում երբեմն առկա պատուհաններից անխոչընդոտ ներթափանցում է բնական լույսը՝ սրելով դրանցում ցուցադրվող ապակյա նմուշների առանձնահատկությունները: Ցուցանմուշների բազմազանության պատճառով թանգարանի կահավորումը տարբեր է, սակայն ունի միևնույն ոճավորումը: Պատերի տեքստային գրվածքները ևս յուրահատուկ շունչ են հաղորդում ինտերիերին: Կարելի է ասել, որ ներքին միջավայրի դիզայնի ներկայացման և ճարտարապետական լուծումներով Գաֆեճեան արվեստի կենտրոնը եզակի է կասկադային կառուցվածքի շնորհիվ և համադրվելով դիզայնի ներկայացման գեղագիտական լուծումներին՝ լավագույնս է մատուցում դրանում առկա տարաբնույթ նմուշները:

Չորրորդ ենթագլխում «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հատակազծային հորինվածքը հիշեցնում է ժամանակաբովանդակային մի ուղի, որով անցել և տառապել է հայ ժողովուրդը: Հատակի և պատերի թեքությունը ճշգրիտ սյուրռեալիստական մթնոլորտ են ստեղծում, ստիպելով լուրաքանչիւր անցուկի վերապրել կատարված: Այստեղ գրաֆիկական տարրերով մեծ տեղ են զբաղեցնում դառնալու ռնդհանուր ինտերիերի բաղկացուցիչ մասը: Դռները մուգ գույներով, տեքստուրի և լուսանկարների ռիթմիկ դասավորվածության շնորհիվ նպաստում են ինֆորմացիայի մատուցման մատչելիությանը, տեղեկատվության տրամադրման օպտիմալացմանը: Բազալտե մոխրագույն մակերեսները, սև, սպիտակ, բոսոր երանգների փայլուն և փայլատ մակերեսների համադրությամբ յուրահատուկ սյուրռեալիստական մթնոլորտ են ստեղծում, որին համադրվելու են գալիս նաև զուգահեռների ապակու շեղումներն ու էկրանների մակերեսները: Միջազգային զուգահեռներ անցկացնելով նմանօրինակ թանգարանների միջև կարելի է նշել Հուրոստի հիշատակի թանգարանը Վաշինգտոնում, Ռուսոդայի ցեղասպանության թանգարանը և այլն: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, նախքան 2015թ.-ի հիմնանորոգումը, ևս ուներ բավականին հետաքրքիր ինտերիերի դիզայն, սակայն վերջին նորոգումից հետո այն արդիականացավ, ստեղծելով ցեղասպանությանը բնորոշ «ցավոտ»

միջավայր, հազեցավ տեխնոլոգիական ինտերակտիվ սարքավորումներով: Կարելի է ասել, որ միջազգային նույնօրինակ թանգարանների շարքում Հայոց ցեղասպանության թանգարանն այժմ ունի բավականին արդիական ինտերիեր:

Հինգերորդ ենթագլխում «Հայաստանի բնության պետական թանգարան» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Թանգարանի առաջին հարկում ներկայացված են ֆլորայի և ֆաունայի հազվագյուտ տեսակներ: Մշտական ցուցադրությունը գտնվում է 4 իրար համակցվող սրահներում: Այստեղ մարմարյա հատակից վեր են խոյանում նույնօրինակ սյուները, որոնք կրում են իրենց վրա առաստաղի ճերմակ մակերեսի ծանրությունը: Ցուցափեղկերն այստեղ տարբերվում են թե՛ իրենց նյութով, թե՛ կառուցվածքով, և թե՛ գունային լուծումներով: Թանգարանի ցուցասրահում լուսավորությունն իրականացվում է հիմնականում առաստաղին փակցված ընդհանուր ցերեկային լուսավորությամբ: Միջազգային նմանօրինակ թանգարաններից աչքի է ընկնում Բնության պատմության ազգային թանգարանը Վաշինգտոնում: Դիտարկելով համաշխարհային փորձը և ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները՝ կարելի է հանգել եզրակացության, որ Հայաստանի բնության պետական թանգարանն ունի արդիականացման կարիք: Ֆունկցիոնալ նպատակահարմարության առումով թանգարանի ինտերիերի դիզայնը պահանջում է հատակազմային այնպիսի լուծումներ, որոնք կամբողջացնեն թեմատիկ հորինվածքը՝ առաջնորդվելով դրանում պահվող և ներկայացվող նմուշների առանձնահատկություններով:

Վեցերորդ ենթագլխում «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Կոմիտասի թանգարան-ինստիտուտը մշտական ցուցադրությամբ ներկայացնում է Կոմիտասի կյանքին ու գործունեությանը նվիրված ամենատարբեր նմուշները: Թանգարանն ունի երկու մուտք, դրանցից առաջինը բացվում է ճակատից, որպես գլխավոր և տանում է դեպի դահլիճ, իսկ երկրորդը բարձրանում է երկար ձգվող վերելքով, որից փոքր երկփեղկ փայտե փորագրությամբ դուռ է բացվում դեպի թանգարանի ցուցասրահներ: Թանգարանի ընդհանուր միջավայրն ունի կենտրոնական հորինվածք, որը ծավալվում է բաց բակի շուրջ: Այն գտնվում է թանգարանի կենտրոնում և բոլոր կողմերից ունի դիտման հնարավորություն: Այսպիսի հորինվածքը պայմանավորված է դրանում գտնվող խորհրդանշական չինարի ծառի առկայությամբ, որն ասես դրսում գտնվելով հանդերձ ինտերիերի անբաժանելի մասն է կազմում: Ցուցարահներում գերշխում են սպիտակի, մոխրագույնի, դարչնագույնի, երբեմն նաև խոր կապույտի համադրումները: Արիեստական լուսավորությունն իրականացվում է կարկասային ուղղորդված և ընդհանրական համակարգով: Դա հնարավորություն է տալիս ընդհանուր մեղմ մթնոլորտում շեշտել ցուցանմուշների կարևորությունը: Այստեղ նաև հետաքրքրական է արհեստական առաստաղի խորշերով արտահայտված խաչաթև լուսավորությունը, որը իր բովանդակային հաջորդականությունն է ստանում պատերին ագուցված կրկին խաչաթև դեկորատիվ լուսատուներով: Միջազգային այսպիսի թանգարաններից են Ֆերենց Լիստի հուշ-թանգարանը Հունգարիայում, Ֆ. Շոպենի թանգարանը Վարշավայում, Մոցարտի թանգարանը Վվատրիայում և այլն: Դիտարկելով համաշխարհային փորձը և ինտերիերի դիզայնի առանձնահատկությունները կարելի է հանգել եզրակացության, որ Կոմիտասի

թանգարան-ինստիտուտը եզակի է իր նշանակությամբ և գաղափարախոսությամբ: Ֆունկցիոնալ նպատակահարմարության առումով թանգարանի ինտերիերի դիզայնը նախագծված է առանձին շինության ներքո, հենց որպես թանգարան, որը չափազանց կարևոր երևույթ է ինտերիերի դիզայնի կազմակերպման մեջ:

Յոթերորդ ենթագլխում՝ «Կալենց թանգարան» վերնագրով ուսումնասիրվել է թանգարանի ինտերիերի դիզայնը, քննարկվել են գոտևորման, հորինվածքային, ոճային, լուսավորության, կահավորման, տեսողական հաղորդակցության հիմնահարցերը, զուգահեռներ են անցկացվել միջազգային նույնօրինակ թանգարանների հետ: Այստեղ ներկայացված են Հարություն և Արմինե Կալենցների գեղարվեստական աշխատանքները, երբեմն կազմակերպվում են նաև ժամանակավոր ցուցահանդեսներ: Թանգարանն ունի ասիմետրիկ հատակագիծ: Դա է պատճառը, որ ի հակադրություն նման հատակագծի, գեղարվեստական աշխատանքները ներկայացվում են կանոնավոր շարվածքով, դասական եղանակով հաջորդելով միմյանց, պահպանելով ընդհանուր եզրերն ու տեսողական մակարդակի էրգոնոմիկ նկատառումները: Թանգարանի ողջ մակերեսը ընդհանրացնում է փայտե մանրահատակը, որը տարածվում է ինչպես սրահներում, այնպես էլ աստիճանների երկայնքով: Պատերի հարդարանքում գերակշռում է սպիտակ ներկվածքը, որն առանձին դաշտերում փոխարինվում է աղյուսագույնով, սևով, կապույտով և այլն: Թեպետ ցուցադրահենքի որոշ հատվածներում առկա են լուսամուտներ, որոնք բավականին փոքր են և ընդհանուր լուսավորության վրա մեծ ազդեցություն չունեն, բացառությամբ վերջին հարկի, որտեղից ելք է բացվում դեպի ապակեպատ պատշգամբ: Լուսավորությունը սրահներում իրականացվում է կարկասային ուղղորդված լուսատուների միջոցով: Հատկանշական է երկրորդ հարկի լուսավորության մի մասը, որն իրականացված է սանհանգույցի համար նախատեսված խողովակների մեջ լուսատուների տեղադրմամբ: Որպես միջազգային զուգահեռ դիտարկվել է Վան Գոգի թանգարանը Ամստերդամում: Այսպիսով ամփոփելով կարելի է ասել, որ Կալենց թանգարանն ունի բավականին գոյություն միջավայր, որն ամբողջապես ոգեկոչում է դրա գաղափարախոսությունն ու կերպարը:

Եզրակացություններ

Սույն առենախոսության արդյունքում պարզ է դառնում, որ թանգարանները մեծ նշանակություն ունեն յուրաքանչյուր երկրի մշակութային կյանքում: Ուսումնասիրությունից երևում է, որ թանգարանների ինտերիերի դիզայնը բավականին բարդ և համակարգված գործընթաց է, որը մեծ կարևորություն ունի ցուցանմուշների գրագետ ներկայացման, պահպանման, ինչպես նաև մշակութային ու կրթական ոլորտներում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ներկայումս ամբողջ աշխարհում մեծ կարևորություն է տրվում թանգարանային ինտերիերի դիզայնին:

Առենախոսության առաջին գլխում ներկայացված Երևանի թանգարանների պրոֆիլային դասակարգումից կարելի է հանգել եզրակացության, որ այստեղ գոյություն ունեն տասներկու գեղարվեստական, տաս պատմական, երկու բնագիտական, երեք տեխնիկական, տասներեք հուշային, մեկ ճարտարապետական և մեկ կոմպլեքսային թանգարան: Դրանցից 25-ը հիմնադրվել են խորհրդային, իսկ մնացյալ 17-ը՝ հետխորհրդային ժամանակաշրջանում: Վերոհիշյալ դասակարգման արդյունքում պարզ է դառնում, որ յուրաքանչյուր թանգարան, պրոֆիլային առանձնահատկություններից ելնելով, պահանջում է ինտերիերի դիզայնի կազմակերպման յուրահատուկ մոտեցում, որն արտահայտվում է ինչպես ընդհանուր հատակագծային հորինվածքում, այնպես էլ հարդարանքի համար կիրառվող նյութերում, ջերմալուսային սարքավորումներում, էրգոնոմիկ

առանձնահատկություններում, կահավորման մեջ: Ուսումնասիրությունը վկայում է, որ թանգարանների ինտերիերի դիզայնը հիմնականում ընթանում է իրար հաջորդող փուլերով, որոնք ընդգրկում են թանգարանի գոտևորումից մինչև կահավորում ընկած գործառույթները: Հետազոտության արդյունքում պարզ է դառնում նաև, որ Երևանի թանգարաններում ինտերիերի դիզայնի լուծումները դրսևորվում են հիմնականում մոդեռնիստական, ռացիոնալիստական, ազգային, սյուրռեալիստական և էկլեկտիկ ոճերով: Ուսումնասիրությունից երևում է, որ էկլեկտիկ թանգարանները բավականին շատ են Երևանում: Դրանք չեն կրում իրենց հստակ կերպարն ու միասնական հորինվածքի բնորոշումը, որը պետք է ներկայացնի թանգարանի ողջ գաղափարախոսությունը:

Ամփոփելով կարելի է ասել, որ Երևանում այժմ գործում են մի շարք թանգարաններ, որոնք իրենց դիզայնեական լուծումներով բավականին արդիական են, հյուրընկալ և հարմարավետ, սակայն դրանց կողքին կարելի է տեսնել նաև այնպիսիները, որոնք պահպանում են չափազանց արժեքավոր նմուշներ, բայց ներկայացման առումով չեն համապատասխանում ժամանակաշրջանի տեխնոլոգիական հնարավորություններին, ինչպես նաև մեծ վտանգ են ներկայացնում ցուցանմուշների պահպանման տեսանկյունից: Համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դառնում նաև, որ Երևանի թանգարաններից մի քանիսը, ինչպիսիք են ԳԱԹ-ը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտը, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտը վերջին տարիներին ստացել են բավականին արդիական կերպար, որի արդյունքում մեծ հետաքրքրություն են առաջացնում հասարակության և զբոսաշրջիկների կողմից: Բացի այդ, Երևանի թանգարանների շարքում հատկապես մեծ խնդիր է ներկայացնում այն հանգամանքը, որ դրանց մեծ մասը տեղ է գտել այնպիսի շինություններում, որոնք ոչ մի կապ չունեն թանգարան հասկացության հետ, ուստի դրանց հատակազծային լուծումները ևս հարմարեցվել են արդեն գոյություն ունեցող միջավայրին: Հետազոտության մեջ քննարկվող ինտերիերի դիզայնի ժամանակակից միտումները և առանձնահատկությունները կարող են նպաստել Երևանի թանգարանների ինտերիերի հետագա արդիականացմանը և զարգացմանը: Հաշվի առնելով, որ վերջին տարիներին զբոսաշրջությունը լայն տարածում է գտնում Հայաստանի Հանրապետությունում, թանգարանային միջավայրի արդիականացումը ևս կարող է նպաստել դրան:

Ատենախոսի կողմից կատարված հրատարակությունները

1. Աճառյան Ա. Հ., Երևանի թանգարանների դասակարգումը և ինտերիերի դիզայնը ըստ պրոֆիլների, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա Տարեգիրք, թիվ 2-3 Երևան, 2015, էջ 242- 252:
2. Աճառյան Ա. Հ., Երևանի «Հաղթանակի» թանգարանի ինտերիերի դիզայնը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016, էջ 287-296:
3. Աճառյան Ա. Հ., Թանգարանների ինտերիերի նախագծման փուլերը և դրանց գեղագիտական առանձնահատկությունները, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2017, էջ 164-174:
4. Աճառյան Ա. Հ., Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ինտերիերի դիզայնը, Կանթեռ, Գիտական հոդվածներ, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2017, էջ 192-199:

АНИ АЧАРЯН РАЧЕВНА
ДИЗАЙН ИНТЕРЬЕРА МУЗЕЕВ ЕРЕВАНА
РЕЗЮМЕ

Научной целью данной диссертации является искусствоведческое исследование дизайна интерьера музеев Еревана. С профессиональной точки зрения исследование включает общий анализ дизайна интерьера музеев: структур и методик, концепций, а также новейших технологий представления выставок и принципов их реализации. Дизайн интерьера музеев - сложный процесс, который включает в себя все предметы архитектурного планирования: освещение, цветовые сочетания, визуальную коммуникацию, меблировку, сохранение и презентацию выставочных материалов.

Диссертация состоит из предисловия, трех глав, заключения, библиографии и приложения. В предисловии представлены: основные проблемы и задачи диссертации, теоретические и методологические основы работы, важность темы и научная новизна, практическая роль и краткое библиографическое обозрение. Изучение интерьеров музеев Еревана как нового сектора имеет большое значение. Поэтому очень важно проводить параллели с существующим международным опытом. Документальный анализ музеев Еревана проводится с помощью качественного метода исследования.

Первая глава называется "Историко-теоретический обзор, международный опыт сферы и выбор объектов изучения". В этой главе приведена общая информация о музеях, рассмотрены вопросы исторического развития музеев, а также методологические основы их проектирования. Здесь в классифицированном порядке представлены основные принципы дизайна интерьера музеев по их профилям. Соответствующие музейные профили следующие: художественные, исторические, природные, технические, мемориальные, архитектурные и комплексные. Принципы дизайна интерьера музеев каждого профиля отличны и требуют специальных подходов для обеспечения требуемых функций. В этой главе, также приведена классификация существующих 42 музеев Еревана по профилям. В результате проведенной классификации музеев Еревана выяснилось, что в городе действуют 12 художественных, 10 исторических, 2 природных, 3 технических, 13 мемориальных, 1 архитектурный и 1 комплексный музей. 25 из вышеперечисленных музеев были созданы во времена Советского Союза, а остальные 17 в период независимой Республики Армения.

Вторая глава называется «Дизайн интерьера музеев Еревана в Советском Союзе». В начале главы в систематическом порядке перечислены те музеи Еревана, которые были созданы в советский период. В этой главе весьма подробно и детально анализируется дизайн интерьеров Матенадарана, Исторического музея Армении, Национальной галереи Армении, Музея литературы и искусства, Музея деревянного искусства, Музея "Родина Мать". Проведен документальный сравнительный анализ дизайна интерьера этих музеев с международными аналогами. Предложены методы усовершенствования дизайна интерьеров этих музеев. В результате исследования выяснилось, что большинство музеев созданных в Советском Союзе не имеют соответствующую планировку и дизайн интерьера. Хотя

некоторые из вышеперечисленных музеев были отремонтированы в последние годы (Матенадаран, Музея литературы и искусства), все равно их доминирующая часть не имеет обобщенный образ и стиль. Нужно подчеркнуть, что в основном, большинство перечисленных музеев не были построены в соответствии с требованиями музейных стандартов, располагаясь в не предназначенных для музеев помещениях. Это является серьезным аргументом для дальнейшего развития их интерьеров.

Третья глава называется «Дизайн интерьера музеев Еревана постсоветского периода». В начале главы в систематическом порядке дана классификация музеев Еревана, построенных в постсоветский период. Проведен документальный сравнительный анализ дизайна интерьера этих музеев с международными аналогами. В этой главе весьма подробно и детально анализируются дизайн интерьеров Музей-института Комитаса, Музей-института Геноцида армян, Музей-института Александра Таманяна, Музея Гафестяна, Музея Каленца, Государственного музея природы. В результате исследования вышеперечисленных музеев выяснилось, что большинство из них имеют соответствующую планировку и дизайн интерьера. Некоторые из этих музеев были отремонтированы или созданы в последние годы (Музей-институт Комитаса, Музеи Геноцида армян, Гафестяна, Каленца), поэтому в них, в основном, символизируются новые тенденции музейного дизайна. Можно смело сказать, что эти музеи олицетворяют развитие музейного дизайна города Еревана.

Эта диссертация показывает, что музеи играют важную роль в культурной жизни каждой страны. Исследование свидетельствует, что дизайн интерьера музеев является довольно сложным и систематическим процессом, в котором большое значение имеют безопасное хранение экспонатов, а также культурная и образовательная деятельность. По профильной классификации музеев можно сделать вывод, что дизайн каждого музея требует особого подхода. Необходимо обращать особое внимание на общую структуру дизайна, используемые материалы, технологическое оборудование и эргономические характеристики мебели. Исследование показывает, что значительная часть интерьеров музеев Еревана имеют модернистический, рациональный, национальный, сюрреалистический и эклектичный стиль. Большинство музеев имеют эклектичный стиль, в котором не выделяется основной образ философии музея, требуется более четкое определение концепции.

В заключение можно сказать, что в настоящее время в Ереване существует целый ряд музеев, дизайн которых вполне современный, уютный и удобный, но рядом с этими примерами можно увидеть и такие музеи, которые хранят чрезвычайно ценные экспонаты в условиях, не соответствующих данному периоду технологических возможностей, поэтому и представляют большую угрозу для сохранения экспонатов.

Данное исследование тенденций и особенностей современного дизайна интерьера музеев может способствовать дальнейшей модернизации и развития музейного интерьера, также может служить в качестве дидактического материала для профессиональной деятельности. Учитывая тот факт, что туризм широко развивается в последние годы в Республике Армения, модернизация музейной среды может также способствовать этому развитию.

ANI HRACHYA ATSHARYAN
THE INTERIOR DESIGN OF YEREVAN MUSEUMS
SUMMARY

The scientific objective of current thesis is the observation of design of Yerevan museums as a relatively new aspect of fine arts. From the professional point of view, research embraces the analyzes of museum interior design in general, its structure and subjects, methodology, concepts as well as modern exhibitional technologies and the principles of their realization.

Museum interior design is a complicated process which includes all subjects of architectural planning, lighting, color combinations, visual communication, furnishing, preservation and presentation of exhibit materials.

The dissertation consists of the following chapters: the preface, three chapters, conclusion, bibliography and appendix.

The main problems and objectives of the dissertation is theoretical and methodological basis of the work, the importance of the subject and scientific novelty, practical role and brief bibliographic review have been presented in the preface. The study of Yerevan museums has a great importance as a new sector and therefore it was necessary to draw parallels with the existing international experience. The novelty here is that of documentary analysis of Yerevan museums by means of qualitative research method.

The first chapter is titled “Historical background, international experience and the choice of studied objects”. General information about museums under research, including their historical development as well as methodological fundamentals of museum design has been presented. In this chapter the main principles of museum interior design in classified order with their profiles have been presented. These museum profiles are the following: art, historical, natural, technical, memorial, architectural and complex. The main principles of a museum interior design in each profile vary definitely and demand different design solutions to provide required functions. The classification order of existing 42 museums in Yerevan also has been presented in the chapter. 25 of the museums mentioned above were found in the Soviet Union and the other 17 museums were found after the independence of the Republic of Armenia.

The second chapter is titled “Interior design of Yerevan museums in the Soviet Union”. At the beginning of the chapter the classified order of Yerevan museums found in the Soviet Union has been presented. The documentary design analysis of the most attractive Yerevan museums of the time provided in comparison with their international parallels has been presented. The interior design of Matenadaran, History museum of Armenia, National gallery of Armenia, Museum of Literature and Art, Woodart museum, Mother Armenia museum has been analyzed in details. In addition comparative analyzes of museum interior design with the international examples is provided. Methods of their future improvement are presented as well.

Eventually, the research revealed that most museums found in the Soviet Union don't have an appropriate planning and interior design. Although several museums mentioned

above have been renovated in recent years (Matenadaran, Museum of Literature and Art), most of them still don't have definite character and style. It should be mentioned that most of these museums were not built in accordance with the principles of museum standards, so these museums are still located in the places that were not suitable for museums. This is a serious argument for the further development of their interiors.

The third chapter is titled "Interior design of Yerevan museums after the Soviet Union". At the beginning the classified order of Yerevan museums found after the Soviet Union is presented. The documentary design analysis of the most attractive museums of the time provided in comparison with the international parallels has been presented. The interior design of Komitas museum-institute, Genocide museum-institute, Alexander Tamanyan architectural museum-institute, Galendz museum, Cafesjian Museum, State Museum of Nature has been analyzed in details.

As a result of the study of the museums mentioned above, it was revealed that most of the museums built in the post-Soviet period have the appropriate layout and interior design. Several of these museums have been built or renovated in recent years (Komitas Museum-Museum, Armenian Genocide Museum, Gafestchyan, Kalentz), therefore, they basically symbolize new trends in museum design. It should be mentioned that many of these museums were built in accordance with the principles of museum standards, so they are located in separate buildings for museums. We can say that in the facades of these museums, the development of museum design in Yerevan is noticeable.

As a result, it is clarified in the dissertation that museums play an important role in the cultural life of every country. The study shows that the interior design of museums is a very complex and systematic process, in which the safe storage and presentation of exhibits as well as cultural and educational activities are of great importance. International experience shows that recently the whole world shows great interest in the interior design of museums. From the profile classification of museums, we can conclude that the design of each museum requires a special approach. It is necessary to pay special attention to the overall structure of the design, the materials used, the technological equipment and the ergonomic characteristics of the furniture. The study shows that many interiors of the museums in Yerevan have a modernistic, rational, national, surreal and eclectic style. Though, most of the museums have an eclectic style, in which the main image of its philosophy does not stand out, requiring a clearer definition of the concept.

In conclusion, we can say that nowadays there are a number of museums in Yerevan, the design of which is quite modern, cozy and comfortable, but next to these examples you can see such museums that store very valuable exhibits in conditions that do not correspond to this period of technological opportunities and poses a great threat to the preservation of exhibits.

This study of trends and features of modern interior design of museums can contribute into the further modernization and development of the museum interior design, as well as it can serve as a didactic material for the further professional activities. In addition it is important to mention that tourism is widely spread in recent years in the Republic of Armenia, and the modernization of the museum environment can also contribute into its development.